ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Աջակցություն Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումին՝ քաղաքացիական հասարակության հետ քաղաքական երկխոսության արդյունավետության բարձրացման նպատակով

Իրականացման ժամանակահատված: 01.01.2024 - 31.12.2026

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 4 500 000

Ընդհանուր բյուջե: € 4 764 979

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/eapcsf/, linkedin.com/company/5289641/admin/page-posts/published/, https://x.com/eapcsf, instagram.com/eapcsf/

Նախագծի կայքէջ: eap-csf.eu/

Նախագծի նկարագրություն:

2009 թվականին հիմնադրումից ի վեր Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումը (ԱԳ ՔՀՖ) հաստատվել է որպես Արևելյան գործընկերության քաղաքականության իրականացման կարևոր շահագրգիռ կողմ՝ ներկայացնելով քաղաքացիական հասարակության ինքնակազմակերպման եզակի մոդել տարածաշրջանային մակարդակով: ԱԳ ՔՀՖ-ն համախմբում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններ Արևելյան գործընկերության վեց երկրներից (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա), ինչպես նաև ԵՄ-ում գործող այն ՔՀԿ-ներին, որոնք ակտիվ են ԱԳ տարածաշրջանում՝ ապահովելով փորձի փոխանակման և գործընկերությունների ձևավորման հարթակ:
ԱԳ ՔՀՖ-ն իր գործունեությամբ նպաստում է Արևելյան հարևանության ձևավորմանը որպես ժողովրդավարական, բարեկեցիկ և խաղաղ տարածաշրջան, որը հավատարիմ է եվրոպական արժեքներին և չափանիշներին, և որտեղ քաղաքացիական հասարակությունը հանդիսանում է ժողովրդավարական կառավարման անբաժանելի բաղադրիչ, ժողովրդավարական բարեփոխումների ակտիվ դերակատար և տարածաշրջանում ժողովրդավարական անցումների վերաբերյալ գիտելիքների կարևոր աղբյուր:
Ֆորումը ապահովում է Արևելյան գործընկերության և Եվրոպական միության քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցությունը Արևելյան գործընկերության քաղաքականության պլանավորման, մոնիթորինգի և իրականացման գործընթացներին՝ ԵՄ և ԱԳ երկրների որոշում կայացնողների հետ կառուցողական երկխոսության շրջանակում՝ ուղղված գործընկեր պետությունների ժողովրդավարական վերափոխմանը և

Ակնկալվող արդյունքներ:

1. Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի (ԱԳ ՔՀՖ) անդամների տեխնիկական և ներքին կարողությունների բարձրացում:
2. ԱԳ ՔՀՖ անդամների համար քաղաքականությունների մշակման գործընթացներում շահերի պաշտպանության (advocacy) հնարավորությունների ընդլայնում: